

թեամբ, 1897ին, և իր անձնական ծախքով շինուած 16 գրադարաններու մէջ նոյն եկեղեցիին մէջ ամփոփուած են վանքին գրեթէ բոլոր ձեռագիրները՝ ցեցակերութենէ և խոնաուութենէ ազատ պահելու զանոնք: Տիգրան Սաւալանեանց 1865-67 ցուցակագրած է 1742 ձեռագիր, բայց վանքին ունեցած ձեռագիրներուն թիւը այժմ 3000է աւելի է, որով Ս. Յակոբեանց Աթոռին պատկանող գրչագրաց թիւը՝ Մայր Աթոռի մասնադարանէն ետքը առաջին տեղը կը զբաւէ: Ս. Յակոբայ վանքին գրչագրաց գիտական և լիակատար ցուցակագրութիւն մը այլևս անհրաժեշտ պէտք մ'է գրականութեան և պատմութեան ծառայութեան համար. ուստի յուսալի է որ Ս. Աթոռոյ վարչութիւնը պատե՛ ժամու ի մտի կ'ունենայ կատարելու զայն յօգուտ բանասիրութեան, ի մասնաւորի Ս. Աթոռի պատմութեան:

3. Ս. Յակոբեանց վանքին գլխաւոր հաստատութիւնները.

Ս. Յակոբեանց վանքին բոլոր հաստատութիւններն ու շէնքերը նկարագրել Ս. Յակոբայ վանքին մենագրութիւնը պիտի ըլլար. ինչ որ մեր նպատակէն դուրս է. վասն զի մենք կէտ նըպատակի ունինք սրբավայրերը նկարագրել, ինչ որ կատարեցինք. ուստի զանց կ'ընենք նկարագրել միաբանական և ուխտաւորական թաղերը, երկրորդական շէնքերը, ինչպէս նաեւ վանքին մէջ գտնուած պարտէզներն ու հրապարակները, այլ միայն կը նկարագրենք գլխաւոր հաստատութիւնները, որոնք են 1. Պատրիարքարան, 2. Տարարան, 3. Մատենադարան, 4. Ժամ. Վարժարան կամ Ճեմարան, 5. Նորաշէն Ս. Թարգմանչաց Նախակրթարան, ինչ ինչ տեղագրական մասերուն համար օգտուելով հոգեւոյս Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեանի Տեղագիր Հայ-Երուսաղէմի ձեռագրէն:

Ա. Պատրիարքարան

Մայր Տաճարէն յետոյ իրբ հոյակապ շէնք կը ներկայանայ Պատրիարքարանը, զոր 1853ին կառուցած է Զմիւռնիացի Յովհաննէս պատրիարքը, որուն ճաշակին և մեծագործութեան արդիւնքն է այս հսկայ ու հոյակապ շինուածքը, որ իրաւամբ կըրնայ մրցիլ նմաններու հետ: Շէնքը բոլորովին քարուկիր է եւ